ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

0010, Երևան -10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3 հեռ. (37410) 524-641, ֆաքս (37410) 523-793

ԳՀ/06.1/4811-12 14.09.2012

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ԻԱԿ իրավաբան
պարոն Գ. Հայրապետյանին

*Ի պատասխան Ձեր*
*2012 թվականի սեպտեմբերի 6-ի*
*Ք/5625-12 թվակիր գրության*

Հարգելի պարոն Հայրապետյան,

Տրամադրվում է տեղեկատվություն ըստ Ձեր կողմից ներկայացված հարցադրումների.

1. Կազմակերպություններն ընտրվում են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 4) ենթակետի աղյուսակի 22-րդ տողով սահմանված կարգով: Կազմակերպությունները չեն ընտրվում որևէ ժամկետով, յուրաքանչյուր առանձին դեպքի համար ընտրվում են տարբեր կազմակերպություններ:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն այցելություն կատարող պաշտոնական պատվիրակությունների այցելության ընթացքում, պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունն իրականացրել է «Աի Լեոնի» ՍՊԸ-ն,

3. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով)» ծրագրով գնումների պլանում նախատեսված է տող՝ <<խորհրդակցությունների, վեհաժողովների կազմակերպման ծառայություններ, ներկայացուցչական ծախսեր>> անվանմամբ, որի համար նախատեսված է գումար 750. 0

հազ. ՀՀ դրամի չափով (ուտեստներ և խմիչքներ առանձնացված չի նախատեսվում), որից կարող են կատարվել ծախսեր՝ պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար: Ինչպես նաև ՀՀ վարչապետի 2012 թվականի ապրիլի 23-ի <<Իսրայելի պետության գյուղատնտեսության և գյուղական զարգացման նախարարի գլխավորած պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետություն այցի մասին>> N 359-Ա որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած հաշվետվությունների, տրամադրվել է գումար, որը կազմում է 911.0 հազ. ՀՀ դրամ:

4. 2012 թվականի հունվարի 1-ից մինչ օրս վերոնշյալ գումարներից ծախսվել է ուտեստներ՝ 191.0 հազ. ՀՀ դրամի չափով և խմիչքներ՝ 283.5 հազ. ՀՀ դրամի չափով:

Նախարարի առաջին
տեղակալ Գ. ԲԱՂԻՅԱՆ

*ֆինանսատնտեսագիտական և*
*հաշվապահական հաշվառման*
*վարչության պետ՝ Կ. Ավետիսյան*
*Հեռ. 523-685*